

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 30.03.2016թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

- Մասնակցում էին՝
- Գ.Գյոզայան ՀՀ Արագածոտնի մարզպետ
 - Ս.Կարապետյան ՀՀ գյուղատնտեսության նախարար
 - Վ.Մարկոսյան ՀՀ ԱԺ պատգամավոր
 - Բ.Առաքելյան ՀՀ ԱԺ պատգամավոր
 - Ա.Ախոյան ՀՀ ԱԺ պատգամավոր
 - Մ.Մնացականյան ՀՀ ԱԺ պատգամավոր
 - Ա.Հարությունյան ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
 - Դ.Վեքիլյան ՀՀ Արագածոտնի մարզի դատախազ
 - Ռ.Կիրակոսյան ՀՀ Արագածոտնի մարզային վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ
 - Հ.Օհանյան ՀՀ ՏԿՁՆ տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի պետ
 - Մ. Աբգարյան մարզպետի տեղակալ
 - Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
 - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
 - ՀՀ Արագածոտնի մարզի ԲԿ ղեկավարներ
 - ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

30.03.2016թ.

ժ. 12.00

1. Առաջին եռամսյակում մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին /զեկ./ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.ԳԱԼՍՏՅԱՆ/:
2. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, բնակչությանը ազոտական պարարտանյութի և սերմացուների հատկացման աշխատանքների մասին /զեկ./ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան/:
3. Մարզի համայնքներում աղբահանության, սանիտարական օրերի և շաբաթօրյակների կազմակերպման մասին /զեկ./ մարզպետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ Ս. Պետրոսյան/:
4. Բնակչությանը տրվող որակյալ խմելու ջրի մատակարարման և վարակիչ հիվանդություններից զերծ պահելու միջոցառումների մասին /Զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ. ՀԱԿՈՒՅԱՆ/:

5. Մարզի համայնքներում առաջնահերթ ծրագրերի և հրատապ լուծում պահանջող խնդիրների մասին /զեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի պետ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ/:

6. Հայտարարություններ

Տարվա առաջին մարզխորհրդի նիստը սկսվեց մարզպետ Գաբրիել Գյոզայանի ողջույնի խոսքով, այնուհետև ներկայացվեց օրակարգը:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների մասին զեկուցեժ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանը: Նա տեղեկացրեց, որ 2016 թվականին գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար ՀՀ Արագածոտնի մարզին հատկացվել է 3300 տոննա ազոտական, 60 տոննա կալիումական և 60 տոննա ֆոսֆորական պարարտանյութեր, ինչպես նաև 450000 լիտր դիզելային վառելանյութ: Համաձայն մարզի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացված հայտի՝ մարզին է հատկացվել 260 տոննա գարնանացան գարու, 5 տոննա առվույտի և 40 տոննա կորնզանի սերմացուներ: Ներկայումս ընթանում են ներկրումները: Մարզում գործում է 65 հակակարկտային կայան: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը առաջարկություն է ներկայացվել մարզի տարածքում նոր հակակարկտային կայաններ տեղադրելու համար: Անդրադարձ եղավ նաև ջրամատակարարման համակարգում առկա իրավիճակին, նշվեցին տարբեր ոլորտներում նախատեսված ծրագրերը:

Ջրամատակարարման թեման շարունակեց ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամ Հարությունյանը: Նա ասաց, որ անցյալ տարվա ընթացքում բավականին լուրջ խնդիրներ են ծագել ոռոգման ոլորտում, որոնք բոլորն էլ բարեհաջող հաղթահարվել են: Նա նշեց այն խնդիրները, որոնց լուծմանն է միտված իրենց գործունեությունը: Դրանց մեջ առանձնանում են ջրամատակարարման ենթակառուցվածքների բարեկարգումն ու սելավատարների պատշաճ գործարկումը: Ա.Հարությունյանն առաջարկեց համայնքի ղեկավարներին աջակցել գումարների հավաքագրման գործընթացին:

Ելույթ ունեցավ նաև գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նա շնորհավորեց նորանշանակ մարզպետին և ասաց, որ պայմանավորվածություններ են ձեռք բերել համատեղ մի շարք ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Անդրադառնալով նախորդ տարվա ընթացքում մարզում իրականացրած գյուղատնտեսական աշխատանքներին, նա նշեց, որ հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 10 %-ը բաժին է ընկնում Արագածոտնին: Արտադրանքի աճ է նկատվել բացառապես բոլոր ուղղություններով: Մասնավորապես ընդարձակվել են ցորենի ցանքատարածությունները և պտղատու այգիների մշակությունը: Ներկայացվեց պետության դիրքորոշումը կոոպերատիվների ստեղծման գործընթացում: Նախախարի կողմից մի շարք համայնքի ղեկավարներ պարգևատրվեցին ոսկե մեդալով և պատվոգրերով:

Համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին անդրադարձավ . մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանը: Նա համայնքի ղեկավարների ուշադրությունը հրավիրեց հողի հարկի, գույքահարկի հավաքագրման, վարձակալական հողերի պայմանագրերի կնքման, բազաներում անճշտությունները վերացնելու հարցերին: Կարևորեց նաև ներքին աուդիտի աշխատանքների ճիշտ կազմակերպումը:

Ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներին ինքնց հետաքրքրող հարցերն ուղղեցին համայնքների ղեկավարները, որոնց վերաբերյալ ստացան պարզաբանումներ :

Քննարկված հարցերն ամփոփեց մարզպետ Գաբրիել Գյոզալյանը : Նա նշեց, որ գրեթե բոլոր համայնքներում առկա հիմնախնդիրների մեջ կանորվում են ոռոգման ջրի մատակարարման և գյուղատնտեսական արտադրանքի մթերման հարցերը : Դրանց լուծմանն են միտված մարզի և հանրապետության ղեկավարության գործունեությունն ու իրականացվող ծրագրերը : Համայնքների ղեկավարներին նա հորդորեց մարզպետարանի պատասխանատուների հետ համատեղ քննարկել և ներկայացնել այն հրատապ խնդիրները, որոնց առաջնահերթ լուծման կարիք ունեն, առաջարկեց համայնքներում կազմակերպել շաբաթօրյակներ, հետևողական լինել խմելու ջրի որակի պահպանմանը : Մարզպետը նշեց, որ մարզի բոլոր համայնքները համաչափ պետք է օգտվեն կառավարության կողմից կամ այլ աղբյուրներով ամենատարբեր ծրագրերից, որպեսզի ապահովվի դրանց համաչափ և արդյունավետ զարգացումը :



Գ.ԳԱԲՐԻԵԼ